Արտատպված է՝ Բոլեսլավ Պրուս, Անիծված երջանկություն (վիպակ, պատմվածքներ), Ե., «Սովետական գրող», 1987: Լեհերենից թարգմանեց Ֆարիդ Գրիգորյանը:

ՄԻԽԱԼԿՈՆ

Երկաթգծի կառուցման աշխատանքներն ավարտվեցին: Կապալառուն վճարեց ում ինչ հասնում էր, խաբեց՝ ում կարողացավ, և բանվորները սկսեցին ցրվել ու խումբ-խումբ հեռանալ իրենց գյուղերը:

Երկաթուղու հողաթմբին կպած պանդոկի մոտ ժխորը մինչև ճաշ չդադարեց: Մեկը արագ-արագ օղաբլիթներ էր խցկում կապոցի մեջ, մյուսը՝ օղու պաշար էր տեսնում, իսկ երրորդը հենց տեղում էլ խմում էր: Հետո, քաթանի մեջ փաթաթելով իրենց իրերն ու կապոցները ուսները գցելով, հեռացան, իբրև հրաժեշտի նշան՝ գոչելով.

— Մնաս բարով, հիմար Միխալկո...

Իսկ Միխալկոն մնաց:

Մնաց մեն-մենակ գորշ դաշտի մեջ կանգնած և, հայացքը հառելով ինչ-որ հեռաստաններ վազող փայլուն ռելսերին, նույնիսկ գնացողների ետևից չձայնեց: Քամին տարուբերում էր նրա թուխ մազերը, ուռցնում սպիտակ չուխաներն ու բերում հասցնում հեռացողների արդեն թուլացող երգի ձայնը:

Շուտով չուխաները, քաթանե վերնաշապիկներն ու կլոր փափախներն անհետացան գիհու թփերի ետևում: Հետո լռեց նաև երգը: Իսկ նա ձեռքերը մեջքին դրած դեռ կանգնած էր, որովհետև չգիտեր, թե ո՞ւր պիտի գնա: Այ, այն նապաստակի պես, որ հենց նոր անցավ ռելսերի վրայով, իր՝ գյուղական որբի տունը լայնարձակ դաշտն էր, իսկ շտեմարանը՝ աստված որտեղ կամենար:

Ոլորանի ետևում սուլոց լսվեց, ծխի թանձր քուլաները պատեցին շրջակայքը, անիվները դղրդացին ռելսերի վրա: Մոտեցավ բանվորական գնացքն ու կանգ առավ կայարանի կիսակառույց շենքի մոտ: Գեր մեքենավարն ու նրա երիտասարդ օգնականը ցած թռան շոգեքարշից և վազեցին դեպի պանդոկը: Նրանց ետևից շտապեցին նաև յուղող բանվորները: Մնաց միայն ինժեները, որը մտախոհ նայելով անմարդաբնակ տարածությանը, ուշադրությամբ ականջ էր դնում շոգեքարշի կաթսայում եռ եկող գոլորշուն:

Տղան ճանաչում էր ինժեներին, ու մինչև գետին խոր գլուխ տվեց նրան:

— Ա, այդ դո՞ւ ես, հիմար Միխալկո: Այստեղ ի՞նչ ես անում,— հարցրեց ինժեները:

— Հեչ, ոչ մի բան,— պատասխանեց տղան:

— Ինչո՞ւ չես գնում ձեր գյուղը:

— Ո՞ւմ համար գնամ, ձերդ ողորմածություն:

Ինժեները կամացուկ ինչ-որ երգ սկսեց երգել, հետո ասաց.

— Որ այդպես է, գնա Վարշավա: Աշխատանք այնտեղ միշտ էլ կգտնես:

— Բայց ես չգիտեմ, թե որտեղ է այդ Վարշավան:

— Նստիր վագոն, այն ժամանակ կիմանաս:

Հիմար Միխալկոն կատվի ճարպկությամբ բարձրացավ ապրանքատար վագոն ու նստեց քարակույտերից մեկի վրա:

— Իսկ փող ունե՞ս, թե ոչ,— հարցրեց ինժեները:

— Ունեմ: Մեկ ռուբլի և քառասուն գրոշ, մի զլոտի էլ՝ մանրադրամով:

Ինժեները շրջակայքը զննելով նորից սկսեց երգել, իսկ շոգեքարշի մեջ առաջվա նման շոգին էր եռում: Վերջապես շշերով ու կապոցներով բեռնավորված երկաթուղայինները դուրս եկան պանդոկից: Մեքենավարն ու օգնականը բարձրացան շոգեքարշ, և գնացքը շարժվեց:

Մի երկու վերստ նոր էին գնացել, երբ ոլորանի ետևից երևացին ճահիճների մեջ կորած աղքատ գյուղի խրճիթները: Այդ տեսնելով, Միխալկոն ուրախացավ: Նա ծիծաղեց, սկսեց ինչ-որ բան գոռալ,— չնայած այդպիսի հեռավորության վրա ոչ ոք ոչինչ էլ չէր լսի,— գլխարկը թափահարել ու այնպես ցատկոտել, որ բարձր հարթակի վրա նստած յուղող բանվորը գոռաց նրա վրա.

— Է՛, ի՞նչ ես դուրս ցցվում: Կընկնես ու գրողի բաժին կդառնաս:

— Ախր դա մեր գյուղն է: Այ, տե՞ս, հրե՜ն, հա՜...

— Դե, եթե ձեր գյուղն է, դա չի նշանակում, որ պիտի վայր ընկնես: Հանգիստ նստիր,— պատասխանեց բանվորը:

Միխալկոն ենթարկվեց: Միայն թե թախիծը կրծում էր սիրտը ու նա սկսեց աղոթել: Ախ, հիմա ինչպես կգնար ճահիճների անդորրի մեջ թաղված հարազատ գյուղը, ուր խրճիթները ծղոտից ու կավից էին: Չնայած բոլորը նրան «հիմար», «անխելք» կամ էլ «տխմար» էին ասում, բայց նա հասկանում էր, որ այլ բնակավայրերում սովից ավելի քիչ են կոտորվում, որ ավելի հեշտ է որևէ անկյուն գտնել, քան իրենց գյուղում: Օ, ուրիշ տեղերում հացն ավելի սպիտակ է, նույնիսկ միս էլ կարելի է տեսնել, տներն էլ շատ են ու բնակիչներն այնպես աղքատ չեն, ինչպես իրենց գյուղում:

Նրանք անցան կայարան կայարանի ետևից, մի տեղ երկար մնացին, մյուսում՝ քիչ: Երբ արևը մայր մտավ, ինժեները կարգադրեց հաց տալ Միխալկոյին, և տղան, ի նշան շնորհակալության, խոնարհվեց մինչև գետին:

Գնացքն անցնում էր անծանոթ տեղանքով: Այստեղ արդեն ջրածածկ ճահիճներ չկային, այլ երևում էին բլրաշատ դաշտերն ու արագընթաց, ոլորապտույտ գետակները: Անհետացան խղճուկ խրճիթներն ու ճյուղերից հյուսված խրձանոցները, երևացին գեղեցիկ դաստակերտերն ու քարե շինությունները: Նույնիսկ ավելի լավը, քան իրենց գյուղի կոստյոլն ու պանդոկը:

Գիշերը կանգ առան լեռան լանջին կառուցված քաղաքի մոտ: Թվում էր, թե տները բարդվում են մեկը մյուսի վրա և բարձրանում վեր, մինչև ամպերը, և ամեն մեկի մեջ այնքան կրակ կար, որքան երկնքում՝ աստղեր: Թեկուզ հարյուր թաղում նայեիր, միևնույն է, այդքան շատ մոմեր չէիր տեսնի, որքան այդ քաղաքում:

Ինչ-որ տեղից հաճելի երաժշտություն էր լսվում, մարդիկ խումբ-խումբ զբոսնում էին, զվարճանում, ծիծաղում, չնայած արդեն ուշ գիշեր էր և այդ պահին իրենց գյուղում շների տագնապալի հաչոցն էր լսվում միայն:

Միխալկոն չէր քնել: Ինժեները կարգադրեց մի ֆունտ երշիկ և մի բոքոն հաց տալ նրան: Հետո ուղարկեցին մի ուրիշ վագոն, որի վրա ավազ էր բարձած: Այստեղ փափուկ էր, ինչպես փետուրե ներքնակի վրա: Բայց տղան չպառկեց: Նա պպզել և հացն ու երշիկը այնպիսի արագությամբ էր խպշտում, որ քիչ էր մնում աչքերը ակնակապիճներից դուրս գային:

«Ահա թե ինչ հրաշքներ կան աշխարհում, աստվա՛ծ իմ»,— մտածում էր նա:

Մի քանի ժամ կանգնելուց հետո լուսադեմին գնացքը շարժվեց, և նրանք առաջ սլացան: Մի անտառամիջի կայարանում, որտեղ նրանք երկար կանգնեցին, բանվորն ասաց, որ ինժեները հավանաբար ետ վերադառնա, որովհետև հեռագիր է ստացել:

Եվ իսկապես, շուտով ինժեները կանչեց Միխալկոյին:

— Ես պետք է վերադառնամ,— ասաց նա,— իսկ դու կարո՞ղ ես մենակ Վարշավա գնալ:

— Ես ի՞նչ գիտեմ,— շփոթվեց տղան:

— Դե հո մարդկանց մեջ չես կորչի:

— Էհ, այնտեղ ո՞վ պետք է ինձ փնտրի որ: Ախր ես ոչ ոք չունեմ:

Եվ իսկապես, ո՞վ պետք է նրան փնտրեր:

— Դե ուրեմն, գնա,— ասաց ինժեները:— Այնտեղ, կայարանի մոտ, հիմա մի քանի բնակելի տներ են կառուցում: Աղյուս կկրես ու սովից չես մեռնի: Միայն թե չխմես: Հետո, երևի, ավելի լավ կդասավորվես: Համենայն դեպս այս մի ռուբլին էլ վերցրու:

Տղան վերցրեց փողը, խոնարհվեց ինժեներին ու նորից նստեց ավազով բարձված իր վագոնը:

Գնացին:

Ճանապարհին Միխալկոն հարցրեց բանվորին.

— Այստեղից մինչև մեր կայարանը հեռո՞ւ է:

— Ո՞վ գիտե: Երևի մի քառասուն մղոն կլինի:

— Իսկ ոտքով ինչքա՞ն պիտի գնամ:

— Հավանաբար մի երեք շաբաթ: Որտեղի՞ց իմանամ:

Անասելի սարսափը պատեց Միխալկոյին: Եվ ինչո՞ւ ինքը, այդ խեղճ ու կրակը, այդքան հեռացավ իր գյուղից, որ վերադառնալու համար երեք շաբաթ է հարկավոր...

Իրենց գյուղում հաճախ էին պատմում մի մարդու մասին, որին հողմը վերցրել ու տարել էր մի ակնթարթում այնպես, որ նույնիսկ երեսիդ խաչ հանել չէիր հասցնի, երկու մղոն այն կողմ էր շպրտել: Փրկել չկարողացան: Իր հետ էլ այդպիսի բան չպատահի՞ հանկարծ: Եվ այդ հրաշունչ մեքենան, որից նույնիսկ ծերերն են վախենում, քամուց ինչո՞վ է լավը: Տեսնես իրեն ո՞ւր կշպրտի...

Այդ մտքից Միխալկոն փակեց աչքերն ու պինդ բռնեց վագոնի կողամասից: Հիմա նա զգում էր, թե որքան արագ է սլանում շոգեքարշը և ինչպես ահարկու է սուլում, թե քամին ինչպես է խփում երեսին ու կարծես ծիծաղում է. հա՛-հա՛-հա՛, հի՛-հի՛-հի՛...

Ախ, տարավ իրեն հողմը, տարա՛վ: Միայն՝ ոչ թե հորից ու մորից պոկեց, ոչ թե հայրական տնից, այլ լայնարձակ դաշտից տարավ նրան՝ անտեր ու անտուն որբուկին:

Միխալկոն հասկանում էր, որ իր հետ ինչ-որ վատ բան է կատարվում , բայց ոչինչ անել չէր կարող: Շատ վատ էր իր վիճակը և, հավանաբար, ավելի վատ կլինի: Բայց ինքն արդեն վատ վիճակի մեջ եղել է, նույնիսկ ավելի վատ ու անմխիթար: Դրա համար էլ բացեց աչքերն ու բաց թողեց վագոնի կողքամասը: Երևի աստծո կամքն է այդպես: Հենց դրա համար էլ ինքն աղքատ է՝ կարիքը միշտ իր հետ պիտի լինի, իսկ սրտում՝ միայն թախիծ ու սարսափ:

Շոգեքարշն ահասարսուռ սուլեց: Միխալկոն առաջ նայեց և հեռվում ծխե թանձր ծածկույթի մեջ անթիվ անհամար կրակներ տեսավ:

— Այնտեղ ինչ-որ բան է վառվո՞ւմ,— հարցրեց նա բանվորին:

— Դա Վարշավան է:

Նորից սարսափը պատեց Միխալկոյին, սիրտը կծկվեց վախից: Միթե՞ ինքն այդքան համարձակություն ունի, որ մտնի այդ ծխակույտի մեջ:

Կայարան: Միխալկոն իջավ: Բանվորի ձեռքը համբուրեց և զգուշությամբ այս ու այն կողմ նայելով, գնաց գարեջրատան կողմը, որի ճակատին ցուցանակի վրա նկարված էին կարմրագույն գարեջրով գավաթն ու կանաչավուն օղին՝ շշերի մեջ: Բայց խմելու համար չէր, որ գնում էր Միխալկոն:

Գարեջրատան ետևում նոր կառուցվող տունն էր, իսկ վաճառասեղանի մոտ խռնվել էին որմնադիրները: Միխալկոն հիշեց ինժեների խորհուրդն ու գնաց աշխատանքի մասին հարցնելու:

Սակայն կրաքարով ու աղյուսի փոշով կեղտոտված հագուստներով, բայց կտրիճի տեսքով որմնադիրները իրենք կպան նրան.

— Է՛յ, դու ո՞վ ես: Որտեղացի՞ ես: Մորդ անունն ի՞նչ է: Ո՞վ է քեզ համար այդպիսի գլխարկ կարել...

Մեկը թևքից քաշեց, մյուսը գլխարկն իջեցրեց աչքերին: Ու հոլի պես այնպես պտտացրին, որ նույնիսկ մոռացավ, թե որ կողմից է մոտեցել նրանց:

— Դու որտեղացի՞ ես,— տղա:

— Վիլչելիկից,— պատասխանեց Միխալկոն:

Նրա ախորժալուր ձայնն ու վախվորած դեմքը զվարճացրին որմնադիրներին, և բոլորը միանգամից հռհռացին:

Իսկ նա կանգնել էր նրանց առջև և չնայած հասկանում էր, որ իրեն կարծես թե վիրավորում են, բայց ինքն էլ էր ծիծաղում:

«Այ թե ուրախ ժողովուրդ են, աստված վկա»,— մտածում էր Միխալկոն:

Նրա ծիծաղն ու հարգալից կեցվածքը որմնադիրներին շատ դուր եկավ: Նրանք հանդարտվեցին, սկսեցին հարցուփորձ անել: Եվ երբ իմացան, աշխատանք է փնտրում, ասացին, որ գնա իրենց հետ:

— Շատ հիմարն է, բայց լավ տղա է երևում,— ասաց վարպետներից մեկը:

— Դե լավ, ընդունենք,— ավելացրեց մյուսը:

— Իսկ «շնորհավորեք» կտա՞ս,— Միխալկոյին հարցրեց ենթավարպետը:

— Քառորդ լիտր օղի կդնես,— պարզաբանեց մյուսը:

— Կամ էլ քոթակ կստանաս,— ծիծաղելով ասաց երրորդը:

Մի քիչ մտածելուց հետո Միխալկոն ասաց.

— Ավելի լավ է ստանամ, քան թե տամ...

Որմնադիրներին դա էլ դուր եկավ: Մի երկու անգամ էլ գլխարկը քաշեցին նրա աչքերին, բայց ոչ օղու մասին հիշեցրին, ոչ էլ քոթակ տվեցին:

Այսպես կատակելով ու ծաղրելով, նրանք հասան կառուցվող տանը և գործի անցան: Վարպետները բարձրացան բարձր փայտամածների վրա, իսկ աղջիկներն ու դեռահաս պատանիները սկսեցին աղյուս մատակարարել նրանց: Որպես նորեկի, Միխալկոյին հանձնարարեցին կրաքարից ու ավազից շաղախ պատրաստել:

Ահա այսպես նա որմնադիր դարձավ:

Հաջորդ օրը նրան օգնության ուղարկեցին իր պես աղքատ մի աղջկա: Նրա ամբողջ հագուստը բաղկացած էր մի ծակ կիսաշրջազգեստից, հին կիսամուշտակից ու վերնաշապիկից: Բոլորն էլ մաշված: Գեղեցկությամբ էլ աչքի չէր ընկնում, Նիհար ու թուխ դեմք, կարճ ու վեր ցցված քիթ, նեղ ճակատ: Բայց Միխալկոն դժվարահաճ չէր: Հենց որ աղջիկը կանգնեց նրա կողքին, տղայի հետաքրքրությունը շարժվեց այնպես, ինչպես միշտ լինում է տղաների մոտ՝ անծանոթ աղջիկների նկատմամբ: Իսկ երբ աղջիկը գունաթափ գլխաշորի տակից նայեց նրան, Միխալկոն զգաց, որ ներսում ինչ-որ տաք հոսանք անցավ: Այնքան համարձակ դարձավ, որ առաջինը խոսեց.

— Դուք որտեղացի՞ եք: Իսկ դա Վարշավայից շա՞տ է հեռու: Շուտվանի՞ց եք որմնադիր աշխատում:

Այդպես նա ամեն ինչ իմացավ աղջկա մասին: Հարգալից «դուք»-ով էր խոսում: Բայց աղջիկը «դու»-ով պատասխանեց, տղան էլ անցավ «դու»-ի:

— Դու քիչ աշխատիր,— ասաց նա:— Ես երկուսիս փոխարեն էլ կաշխատեմ:

Եվ այնպես կպավ գործի, որ քրտինքը առվակի նման հոսում էր նրանից, իսկ աղջիկը շաղախի վրա բահը ետ ու առաջ էր տանում միայն:

Այդ օրվանից նրանք միշտ միասին էին ու միշտ մենակ: Երբեմն նրանց էր միանում մի արհեստավոր, որը աղջկան միշտ հայհոյում էր, իսկ տղային ձեռք առնում: Այդպիսիներից լավ բան անհնար է սպասել: Երեկոները Միխալկոն գիշերելու էր մնում կիսավարտ շենքում, իսկ ընկերուհին քաղաք էր գնում մյուսների ու այդ արհեստավորի հետ, որը նրան հայհոյում, երբեմն էլ պատահում էր, մի երկու անգամ բռունցքով հասցնում էր:

«Թե ինչու աղջկան չի սիրում,— ինքն իրեն մտածում էր Միխալկոն:— Դե, ի՞նչ արած: Արհեստավոր է, իրավունք ունի մեզ վրա գոռալու»...

Եվ Միխալկոն ամեն ինչ անում էր, որ աղջկա հոգսը թեթևանա: Միշտ երկուսի փոխարեն էր աշխատում, նախաճաշին իր հացի կեսն էր տալիս, իսկ ճաշին նրա համար հինգ գրոշով բորշչ էր գնում, որովհետև աղջիկը երբեք փող չէր ունենում:

Երբ երկուսին կարգադրեցին փայտամածների վրա աղյուս բարձրացնել, Միխալկոն աղջկան օգնել այլևս չէր կարող, որովհետև վարպետն անընդհատ հետևում էր նրանց:

Բայց տղան ճռճվող սանդուղքով աղջկա ետևից բարձրանալիս անընդհատ հետևում էր նրա շարժումներին և այնպես էր վախենում, որ հանկարծ ցած չգլորվի կամ աղյուսները վրան չթափվեն:

Տեսնելով Միխալկոյի հոգատարությունը, արհեստավորը սկսեց ձեռք առնել նրան և ուրիշներին էլ դրդել: Նրանք էլ էին ծիծաղում ու վերևից գոռում.

— Ջո՛ւ-ջո՛ւ-ջո՛ւ, հիմարի՛կ...

Մի անգամ ճաշի ժամանակ արհեստավորը աղջկան մի կողմ կանչեց: Ինչ-որ բան էր պահանջում և նույնիսկ ավելի շատ ծեծեց, քան երբևէ: Այդ խոսակցությունից հետո աղջիկը հեծկլտալով եկավ Միխալկոյի մոտ և հարցրեց, թե չի՞ կարող արդյոք մի քսան գրոշ պարտք տալ:

Աղջկա համար նա ամեն ինչ էլ կարող էր: Արագ-արագ բաց արեց կապոցը, որի մեջ դեռ կայարանից բերած փողերն էր պահում ու աղջկան տվեց նրա խնդրած գումարը:

Աղջիկը փողը տվեց արհեստավորին և այսուհետև օր չէր լինում, որ Միխալկոն աղջկան անվերադարձ պարտք չտար: Մի անգամ էլ քաշվելով հարցրեց.

— Իսկ ինչո՞ւ ես այդ անիծյալին փող տալիս:

— Ահ, հենց այնպես,— պատասխանեց աղջիկը:

Մի օր էլ արհեստավորը վիճեց գրագրի հետ ու թողեց աշխատանքը: Եվ ոչ միայն ինքը թողեց, այլև հրամայեց աղջկան նույնն անել, ինչպես իր ծառային, ու կարգադրեց գնալ իր ետևից:

Աղջիկը տատանվեց: Բայց երբ գրագիրը սպառնաց, որ եթե նա մինչև երեկո չաշխատի, ապա ամբողջ շաբաթվա աշխատավարձը կկտրի, աղջիկը շարունակեց աղյուսներ կրել: Աղքատ մարդու համար ամեն մի կոպեկն էլ թանկ է, այն էլ այդպես դժվար աշխատած կոպեկը:

Արհեստավորը կատաղեց:

— Կգա՞ս, քածի մեկը, թե՞ ոչ,— գոռում էր նա:

— Ինչպե՞ս գամ, եթե իմ աշխատանքի փոխարեն ինձ փող չեն տա: Ախր այդ մի ռուբլով ես ինձ համար գոնե նոր կիսաշրջազգեստ կգնեմ...

— Դե՛,— գոռաց արհեստավորը,— աչքիս չերևաս այլևս, ոտքդ էլ իմ շեմից ներս չմտնի, թե չէ այնքան կծեծեմ, որ ոտքերդ կփռես:

Եվ գնաց քաղաք:

Երեկոյան սովորականի նման որմնադիրները ցրվեցին, իսկ նոր տանը զիշերելու մնացին Միխալկոն ու աղջիկը:

— Դու չե՞ս գնալու,— զարմացած հարցրեց Միխալկոն:

— Էլ ո՞ւր գնամ: Չէ որ նա ասաց, որ ինձ տանից դուրս կշպրտի:

Միայն հիմա տղան կռահեց, որ իր վատ կանխազգացումներն անտեղի չէին:

— Ուրեմն... դու նրա հետ քնո՞ւմ էիր,— դողացող ձայնով հարցրեց նա:

— Հա՛, դե՛...,— շփոթված կմկմաց աղջիկը:

— Եվ չնայած այն բանին, որ նա քեզ ծեծում էր, ամբողջ փողդ նրա՞ն էիր տալիս:

— Այո, իհարկե...

—Իսկ հանուն ինչի՞ էիր այդպիսի ամոթանք տանում:

— Ախր սիրում էի նրան,— կամաց ասաց աղջիկը՝ փայտամածների այուների ետևում թաքնվելով:

Կարծես դանակը տղայի սիրտը խրեցին: Եվ իզուր չէ, որ նրա վրա ծիծաղում էին:

Միխալկոն մոտեցավ աղջկան:

— Իսկ հիմա նրան էլ չե՞ս սիրի,— քաշվելով հարցրեց նա:

— Ո՛չ,— պատասխանեց աղջիկը ու լաց եղավ:

— Միայն ի՞նձ կսիրես:

— Այո:

— Ես քեզ չեմ ծեծի ու փողերդ էլ չեմ վերցնի:

— Դե՛ հա, ճիշտ է:

— Ինձ հետ քեզ լավ կլինի:

Աղջիկը ոչինչ չպատասխանեց, միայն ավելի ու ավելի ուժեղ էր լաց լինում և ամբողջ մարմնով դողում էր:

Գիշերը խոնավ ու ցուրտ էր:

— Մրսո՞ւմ ես,— հարցրեց տղան:

— Ցուրտ է,— պատասխանեց աղջիկը հեծկլտալով:

Միխալկոն աղջկան նստեցրեց աղյուսների կույտի վրա: Հետո հանեց կաֆտանն ու փաթաթեց ընկերուհուն, իսկ ինքը մնաց մի տակ շապիկով:

— Մի՛ լար, մի՛ լար,— համոզում էր նա աղջկան:— Միայն մի գիշեր կմնաս այստեղ: Չէ՞ որ դու մի ռուբլի ունես: Դրանով վաղը որևէ անկյուն կճարենք, իսկ քո կիսաշրջազգեստն իմ փողերով կառնենք: Դե՛, մի՛ լար...

Բայց աղջիկը նրա խոսքերին այլևս ուշադրություն չէր դարձնում: Նա գլուխը բարձրացրեց ու ականջ դրեց: Նրան թվաց, թե դրսից ծանոթ քայլերի ձայն լսեց:

Քայլերը մոտեցան: Միաժամանակ ինչ-որ մեկը սկսեց սուլել ու կանչել.

— Տո՛ւն արի, լսո՞ւմ ես: Դու այդ որտե՞ղ ես:

— Ես այստեղ եմ,— բացականչեց աղջիկն ու տեղից վեր թռավ:

Նա դուրս վազեց, ուր սպասում էր արհեստավորը:

— Ես այստեղ եմ:

— Իսկ դու փող ունե՞ս,— հարցրեց տղամարդը:

— Կա: Ահա, վերցրու,— ասաց աղջիկը՝ մեկ ռուբլին նրան մեկնելով:

Արհեստավորը փողը դրեց գրպանը, հետո բռնեց աղջկա մազերից ու սկսեց ծեծել, միաժամանակ գոռգոռալով.

— Մյուս անգամ ինձ կլսես, թե չէ տուն չեմ թողնի: Այս քոսոտ մի ռուբլով ինձանից չես պրծնի... Կլսե՞ս ինձ, կլսե՞ս,— կրկնում էր նա՝ բռունցքներով հարվածելով աղջկան:

— Ա՜խ, աստված իմ,— ճչում էր աղջիկը:

— Իսկ դու ինձ լսիր: Արա այն, ինչ քեզ կհրամայեմ:

Հանկարծ նա բաց թողեց աղջկան՝ զգալով, որ օձիքն ինչ-որ մեկի ուժեղ ձեռքերի մեջ է: Դժվարությամբ գլուխը շրջեց ու տեսավ Միխալկոյի ցասկոտ աչքերը:

Արհեստավորը ուժեղ տղամարդ էր և այնպես հարվածեց տղայի ճակատին, որ նրա ականջները զրնգացին: Բայց տղան օձիքը բաց չթողեց: Ընդհակառակն, ավելի ու ավելի ամուր սկսեց սեղմել կոկորդը:

— Ինձ մի խեղդիր, բանդիտ, թե չէ ես քեզ ցույց կտամ,— խղճուկ ձայնով տնքաց արհեստավորը:

— Իսկ դու նրան մի ծեծիր,— ասաց տղան:

— Չեմ ծեծի,— խռխռաց արհեստավորն ու լեզուն դուրս գցեց:

Միխալկոն մատները բաց թողեց, արհեստավորը երերաց կանգնած տեղում: Դժվարությամբ շունչը տեղը բերեց ու ասաց.

— Եթե նա չի ուզում, որ իրեն ծեծեմ, թող իմ ետևից չգա: Սիրո՞ւմ է ինձ, շատ լավ, բայց ես ծեծում եմ: Դա իմ օրենքն է: Թե չէ իմ ինչի՞ն է պետք աղջիկը, եթե նրան չի կարելի ծեծել: Թող գրողի ծոցը կորչի:

— Եվ կգնա... Պա՜հ, սրան տե՛ս,— ասաց տղան:

Բայց աղջիկը բռնեց նրա ձեռքից:

— Դե՛, բավական է,— դողալով ասաց նա Միխալկոյին ու փարվեց նրան:— Քիթդ մեր գործերի մեջ մի խցկիր...

Տղան զարմանքից քարացավ:

— Իսկ դու տուն արի,— ասաց աղջիկն արհեստավորին ու թևանցուկ արեց նրան:— Պե՞տք է, որ ամեն մեկը փողոցում քեզ խայտառակ անի...

Արհեստավորը պոկվեց նրանից ու ծիծաղելով ասաց.

— Դու գնա, գնա նրա մոտ: Նա քեզ չի ծեծի, քեզ փող կտա...

— Է-է՛-հ, ձայնդ կտրի՛ր,— բարկացավ աղջիկն ու առաջ անցավ:

— Տեսնո՞ւմ ես: Կնոջ հետ պետք է վարվել ինչպես շան հետ,— ասաց արհեստավորն աղջկա կողմը ցույց տալով:— Եթե նրան ծեծես, նա քո ետևից կրակի մեջ էլ կմտնի...

Եվ անհետացավ: Միայն նրա չար ծիծաղն էր երկար ժամանակ լսվում գիշերային լռության մեջ:

Միխալկոն կանգնել ու նայում էր նրանց ետևից: Հետո վերադարձավ փայտամածների մոտ ու երկար նայեց այն տեղին, ուր աղջիկն էր նստել:

Գլուխը պտտվում էր, օդը չէր բավականացնում: Հենց նոր խոստացավ սիրել իրեն ու թողեց գնաց: Հենց նոր երջանիկ էր, ինչքա՛ն լավ էր կենդանի էակի հետ, այն էլ աղջկա, իսկ հիմա այնպես դատարկ ու տխուր է...

Ինչո՞ւ գնաց: Երևի դա նրա կամքն էր, այդպես էր ուզում: Ի՞նչ կարող է անել ինքը, չնայած և բարի է, և ուժեղ: Բնազդաբար նա հարգում էր աղջկա սերը արհեստավորի նկատմամբ, չէր բարկանում նրա վրա, որ խոսքը դրժեց և չէր էլ մտածում նրա վզին ուժով փաթաթել իր զգացմունքները: Բայց և այնպես ինքը շատ ողորմելի վիճակում է, որ նա գնաց, շատ ողորմելի ու անմխիթար...

Միխալկոն կրաքարից մաշված ձեռքերով սրբեց աչքերը, վերցրեց աղյուսների կույտի վրա ընկած և կարծես դեռ աղջկա ջերմությունը պահպանած կաֆտանը, նորից դուրս եկավ, երկար-երկար կանգնեց այնտեղ: Մառախուղի մեջ ոչինչ չէ երևում, միայն կարմիր լապտերներն էին փայլփլում այս ու այնտեղ Միխալկոն վերադարձավ սառը շենքը և մեկնվեց գետնի վրա: Բայց քունը չէր տանում: Խոր հառաչում էր ու տանջվում մենակության մեջ, թախծում իր ընկերուհու համար:

Իր ընկերուհու, որովհետև աղջիկն ինքն ասաց, որ կսիրի իրեն:

Հաջորդ օրը սովորականի նման գործի անցավ:

Բայց աշխատանքն արդեն սրտովը չէր: Նա հոգնածություն էր զգում և կառույցն էլ արդեն զզվեցրել էր: Ուր էլ գնար, ինչի էլ որ ձեռք տար, ինչի էլ նայեր, ամեն ինչ նրան հիշեցնում էր աղջկան ու իր հիասթափությունը: Մարդիկ էլ էին ծիծաղում նրա վրա ու ձեռք առնում.

— Դե ինչ, հիմար Միխալկո, ճի՞շտ է, որ Վարշավայում աղջիկները շատ թանկ են...

Թանկ են և այն էլ ինչքա՛ն: Տղան նրա վրա ծախսել էր իր ամբողջ խնայողությունները, չէր կերել, իր համար ոչինչ չէր գնել, աղջկանից վերաբերմունք չէր տեսել և այդքանից հետո էլ իրեն այդպես անողորմ ձևով լքեց:

Այստեղ նրա համար և ծանր էր, և ամոթալի: Ու երբ իմացավ, որ Վարշավայում որմնադիրներին ավելի շատ են վճարում, առաջին անգամ պատրաստվեց քաղաք գնալու:

Պետք է գնար մի արհեստավորի հետ, որը խոստացել էր նրան տանել այն փողոցը, ուր շատ կառույցներ կան:

Գնացին վաղ առավոտյան, երկար քայլեցին, մինչև հասան Վիսլային: Կամուրջը տեսնելով, տղան զարմանքից քարացավ: Այդ պահին անգամ աղջկա մասին միտքը դուրս թռավ գլխից:

Պահակակետի մոտ փոքր-ինչ դանդաղեց.

— Դե, ի՞նչ պատահեց քեզ,— հարցրեց արհեստավորը:

— Չգիտեմ, ինձ կթողնե՞ն կամրջով անցնելու, թե ոչ,— պատասխանեց Միխալկոն:

— Տխմարի մեկը,— հարձակվեց նրա վրա արհեստավորը,— երբ որևէ մեկը կհարցնի, ասա որ ինձ հետ ես:

«Վա՛յ, ճիշտ որ»,— ուրախացած մտածեց տղան ու զարմացավ, որ այդ մասին ավելի շուտ չի մտածել:

Հետո զարմանքով նայում էր բեռնանավերին, որոնք, չնայած իրենց ծանրությանը, չէին սուզվում, հետո էլ ոչ մի կերպ չէր ուզում հավատալ, որ կամուրջն ամբողջովին երկաթից է:

«Երևի այստեղ ինչ-որ խաբեություն կա,— ինքն իրեն մտածում էր նա։— Այդքան երկաթ ամբողջ աշխարհում էլ չես գտնի»:

Այսպես գնում էին արհեստավորն ու Միխալկոն մեկը մյուսի ետևից՝ սկզբում կամրջով, հետո Նովի Սյեզդով, հետո փողոցով: Երբ անցնում էին ամրոցի մոտով, տղան հանեց գլխարկն ու խաչակնքեց երեսը՝ ամրոցը կոստյոլի տեղ ընդունելով: Բեռնարդինների վանքի մոտ քիչ մնաց հանրակառքի տակ ընկներ: Աստվածամոր արձանի մոտ տղան ցանկացավ ծնկի իջնել ու աղոթել: Արհեստավորն ուժով նրան տարավ իր հետ:

Փողոցներում անասելի աղմուկ էր: Կառքերը սլանում էին մեկը մյուսի ետևից, մարդիկ խմբերով զբոսնում էին: Մի քանիսին Միխալկոն զիջում էր ճանապարհը, մյուսներին ընդհարվում ու վախից սարսափած սպասում, որ հիմա իրեն կծեծեն: Վերջապես նրա գլուխը սկսեց պտտվել ու կորցրեց արհեստավորին:

— Որտե՞ղ եք դուք: Որտե՞ղ եք դուք,— հուսահատությունից գոռաց նա ու սկսեց վազել փողոցով:

Ինչ-որ մեկը կանգնեցրեց նրան ու բարկացած ասաց.

— Կամա՛ց, շուն շան որդի: Այստեղ գոռալը արգելված է:

— Ախր իմ պանը կորավ:

— Այդ ի՞նչ պան է:

— Մեր արհեստավորն է, որմնադիրներից:

— Ա՛յ քեզ պան: Ո՞ւր ես գնում:

— Այնտեղ, որտեղ տներ են կառուցում:

— Ի՞նչ տուն:

— Դե տուն էլի, աղյուսից,— պատասխանեց տղան:

— Այ քեզ հիմարի գլուխ: Ախր տներ կառուցում են և այստեղ, և այնտեղ, ամենուր:

— Ես ոչ մի տեղ չեմ տեսնում...

Բռնեցին նրա թևից ու սկսեցին ցույց տալ:

— Այ, տե՛ս, մի տուն այստեղ են կառուցում, մյուսը՝ այնտեղ...

— Այո, այո,— ասաց Միխալկոն և մոտեցավ երկրորդին, որովհետև առաջինին մոտենալու համար փողոցը պիտի անցներ:

Տեղ հասնելով, նա հարցուփորձ արեց արհեստավորի մասին, բայց ոչ ոք չէր տեսել և նրան հաջորդ կառույցը ցույց տվեցին: Այնտեղ էլ արհեստավոր Նաստալիի մասին ոչ ոք չէր լսել: Տղան ստիպված էր ուրիշ տեղ փնտրելու:

Այսպիսով նա մի քանի փողոց անցավ ու տասնյակից ավելի կառույցներում եղավ՝ մտքում զարմանալով, թե այսքան մարդիկ որտե՞ղ են ապրում, եթե նրանց համար բնակարաններ հիմա են միայն կառուցում:

Կամաց-կամաց նա հեռացավ քաղաքի կենտրոնից: Այստեղ անցորդներն ավելի քիչ էին,— փողոցներն այնքան աղմկոտ չէին, կառքեր էլ համարյա չէին երևում, իսկ փայտամածները, կարմիր պատերն ու աղյուսի կույտերն ավելի շատ էին:

Միխալկոն, արհեստավորին գտնելու հույսը կորցրած, սկսեց մտածել, որ ավելի լավ է ինքն իր համար աշխատանք գտնի:

Նա մոտեցավ առաջին իսկ կառույցին, խառնվեց բանվորներին ու սկսեց նայել: Ժամանակ առ ժամանակ խոսակցության մեջ էր մտնում, սրան-նրան օգնում: Մեկին օգնեց աղյուսները շարել, մյուսին բահը տվեց, իսկ նրանց, ովքեր շաղախ էին պատրաստում, խորհուրդ տվեց, թե ինչպես կարելի է ավելի լավ շաղախել: Երբ անցավ գործնականորեն բացատրելուն, այնպես եռանդուն կերպով սկսեց աշխատել, որ վարպետին կեղտոտեց ոտքից մինչև գլուխ:

— Դու այստեղ ի՞նչ ես անում, շան որդի,— հարցրեց նրան գրագիրը:

— Աշխատանք եմ փնտրում:

— Այստեղ քեզ համար աշխատանք չկա:

— Հիմա չկա, գուցե հետո կլինի: Դուք ոչինչ էլ չեք կորցնի, եթե ես որևէ մեկին օգնեմ:

Խորամանկ գրագիրը իսկույն հասկացավ, որ տղայի գրպաններում մկներ են խաղում: Նա հանեց ծոցատետրը, մատիտով ինչ-որ բան գրեց ու ջնջեց և վերջիվերջո Միխալկոյին ընդունեց աշխատանքի:

Հետո մարդիկ ասում էին, որ գրագիրը Միխալկոյից ավելի շատ էր գռփում, քան մյուսներից՝ օրական քսան գրոշ:

Կառույցում Միխալկոն մնաց մինչև աշուն: Սովից չմեռավ, բայց գիշերելու համար չէր վճարում և նույնիսկ իրեն երկարաճիտ կոշիկներ չգնեց: Միայն մի երկու անգամ սուրբ կիրակիի առիթով հարբեց: Մի անգամ նույնիսկ ցանկացավ պանդոկում կռիվ սարքել, բայց չհասցրեց՝ դռնից դուրս շպրտեցին:

Կառույցը բարձրանում էր ժամ առ ժամ: Որմնադիրները դեռ կողաշենքերը չէին վերջացրել, իսկ տան ճակատամասն արդեն պատրաստ էր ծածկելու համար, սվաղված ու ապակեպատված էր, և նույնիսկ մի քանի բնակիչներ արդեն կահ-կարասին բերեցին:

Սեպտեմբերի վերջին սկսվեցին անձրևները: Աշխատանքները դադարեցին, ու սնագործ բանվորներին ազատ արձակեցին: Նրանց մեջ էր նաև Միխալկոն:

Գրագիրը սկսեց նրան ավելի քիչ վճարել՝ խոստանալով, որ բոլորը միանգամից կտա: Իսկ երբ վերջնահաշվի ժամանակը եկավ, տղան, չնայած անգրագետ լինելուն, հասկացավ, որ գրագիրն իրեն խաբել է: Նա տղային երեք ռուբլի տվեց, իսկ օրենքով պետք է հինգ, նույնիսկ վեց ռուբլի տար:

Միխալկոն վերցրեց երեք ռուբլին, գլխարկը հանեց, ծոծրակը քորեց ու մի ոտքից մյուսին հենվելով սպասեց: Սակայն գրագիրը այնքան էր զբաղված իր ծոցատետրով, որ մինչև կնկատեր Միխալկոյին, մի քանի անգամ կարելի էր աստծուն աղոթք կարդալ, և խստորեն հարցրեց.

— Էլ ի՞նչ ես ուզում:

— Ախր... կարծես ինձ ավելի շատ է հասնում,— խոնարհաբար ասաց Միխալկոն:

Գրագիրը կարմրեց: Նա առաջացավ դեպի տղան և կուրծքը դուրս ցցելով խոյացավ նրա վրա:

— Իսկ դու անձնագիր ունե՞ս: Ի՞նչ թռչնակ ես դու:

Միխալկոյի հոգին կուչ եկավ: Գրագիրը շարունակեց.

— Ինչ է, անտաշ թափթփուկ, կարծում ես քեզ խաբել եմ, հա՞:

— Ախր...

— Հիմա միասին ոստիկանատուն կգնանք և այնտեղ քեզ փաստացի կապացուցեմ, որ դու գող ես ու թափառական շրջմոլիկ:

Անձնագիրն ու ոստիկանությունը վախեցրին Միխալկոյին: Նա միայն կարողացավ թոթովել.

— Թող ինձ հասցված վնասը ձեզ օգուտ բերի...

Եվ հեռացավ կառույցից:

Հավանաբար գրագիրն այնքան էլ ցանկություն չուներ ոստիկանություն ընկնելու, որտեղ նրան լավ էին ճանաչում: Ամեն ինչ սպառնալիքներով էլ ավարտվեց:

Տղան հիմա կարծես լայնարձակ դաշտում լիներ: Անցավ-գնաց իր փողոցով, թեքվեց երկրորդը, երրորդը, մտնելով ամեն տեղ, ուր կարմիր պատեր կամ հողի մեջ խրված սյուներ էր տեսնում: Սակայն աշխատանքները կամ ավարտվել էին, կամ էլ մոտենում էին ավարտին: Եվ երբ հարցնում էր, թե աշխատանքի չե՞ն ընդունի արդյոք, նրան ոչ ոք չէր պատասխանում:

Այսպես նա քարշ եկավ մի օր, երկու օր, զգուշորեն շրջանցելով ոստիկաններին, որպեսզի անձնագիր չպահանջեն: Տաք ճաշերով պանդոկներ նա չգտավ, ուստի սնվում էր միայն էժանագին երշիկով, հացով ու չորացած ձկով, վրայից էլ օղի էր խմում:

Նա արդեն մեկ ռուբլի ծախսել էր, այդպես էլ ոչ մի լավ բան չգտնելով: Գիշերում էր ցանկապատերի տակ, կարոտում մարդկանց: Գոնե մի երկու բառ փոխանակի որևէ մեկի հետ:

Այստեղ մի նոր միտք ծագեց գլխում, որ ավելի լավ է գյուղ վերադառնա: Սկսեց սրան-նրան հարցնել, թե ինչպես գնա, որ երկաթուղի դուրս գա: Մտքում պահելով տված խորհուրդները, վերջապես ճանապարհ դուրս եկավ, բայց ոչ իր ճանապարհը:

Միխալկոն հսկայական մարդաշատ կայարան տեսավ բարձրահարկ շենքերով շրջապատված, իսկ ռելսեր չկային:

Վախեցավ տղան, շփոթվեց, չհասկանալով թե ինչ պատահեց: Վերջապես մի բարեհոգի մարդ բացատրեց, որ այսպիսի երեք ճանապարհներ էլ կան, բայց Վիսլայից այն կողմում:

Նոր միայն հիշեց, որ այստեղ կամրջի վրայով եկավ: Գիշերեց ինչ-որ ճանապարհամերձ առվակում, իսկ առավոտյան սկսեց հարցուփորձ անել, թե ինչպես գնա, որ կամրջին հասնի: Մանրամասն բացատրեցին, թե սկզբում հարկավոր է ուղիղ գնալ, հետո թեքվել դեպի ձախ, հետո՝ դեպի աջ: Միխալկոն ամեն ինչ մտքում էր պահում, բայց երբ գնաց ու թեքվեց, միանգամից Վիսլան տեսավ, սակայն կամուրջն այդպես էլ չգտավ:

Վերադարձավ քաղաք: Ի լրումն բոլոր դժբախտությունների, անձրև սկսեց գալ: Մարդիկ անձրևանոցների տակ թաքնվեցին, իսկ ովքեր չունեին, այս ու այն կողմ էին վազում: Այսպիսի անձրևին Միխալկոն չհամարձակվեց հարցնել անցորդներին, թե ինքն ինչպես պիտի գնա:

Երբ անձրևն ուժեղացավ, Միխալկոն կանգնեց պատի մոտ՝ իր թաց կաֆտանի մեջ ցրտից դողալով: Միայն մի բանի համար էր ուրախ, որ անձրևը լվանում է բոբիկ ոտքերը:

Այսպես նա այնքան կանգնեց, մինչև ցրտից կապտեց, իսկ երկար մազերից անձրևաջուրն անարգել լցվում էր օձիքից ներս: Այդ պահին նրա առջև ինչ-որ պարոն հայտնվեց:

— Դու ինչ է, աղքա՞տ ես,— հարցրեց նա Միխալկոյին:

— Ոչ:

Մի քանի քայլ անելուց հետո պարոնը վերադարձավ ու նորից հարցրեց.

— Դու ուտել ուզո՞ւմ ես:

— Ոչ:

— Չես մրսո՞ւմ:

— Ոչ:

— Այ քեզ ավանակ,— փնթփնթաց պարոնն ու ավելացրեց,— իսկ արծաթե տասկոպեկանոց կվերցնե՞ս:

— Եթե տաք, իհարկե կվերցնեմ...

Պարոնը նրան տասնհինգ կոպեկանոց տվեց ու հեռացավ՝ քթի տակ փնթփնթալով:

Հետո նորից կանգ առավ, նայեց գյուղացուն, կարծես ինչ-որ բան մտորելով, և վերջապես գնաց:

Միխալկոն ձեռքում սեղմել էր դրամն ու զարմացած մտածում էր. «Ահա թե ինչպիսի բարի մարդիկ կան, աստված վկա»:

Հանկարծ գլխի ընկավ, որ բարի պարոնը երևի իրեն ճանապարհը ցույց կտար, կօգներ գտնելու կամուրջը, բայց արդեն ուշ էր:

Մթնեց: Լապտերները վառվեցին, իսկ անձրևն ավելի ու ավելի էր ուժեղանում: Միխալկոն փորձեց ավելի մութ փողոց գտնել: Գնաց, թեքվեց մեկ, երկրորդ անգամ: Տեսավ նոր կառուցված քարե շենքեր և հանկարծ ճանաչեց այն փողոցը, որտեղ ինքն աշխատել էր մի քանի օր առաջ:

Ահա այստեղ սալարկը վերջանում է: Այստեղ ցանկապատն է: Քիչ հեռու ածուխի պահեստն է, հետո՝ իր տունը: Մի քանի պատուհաններում լույս էր վառվում, իսկ բաց դարպասներից երևում էին չավարտված կողաշենքերը:

Միխալկոն բակ մտավ: Դե գոնե այստեղ ինքը իրավունք ունի գիշերելու: Չէ՞ որ այս տունն ինքն է կառուցել:

— Է՛յ, դու, ո՞ւր ես գնում,— նրա ետևից հարցրեց սանդուղքի վրա կանգնած մուշտակ հագած մարդը: Դրսում արդեն ցուրտ էր:

Միխալկոն ետ նայեց:

— Այդ ես եմ,— ասաց նա,— գնում եմ ներքնահարկում քնելու:

Մուշտակ հագած մարդը կատաղեց:

— Այստեղ աղքատների համար հանրակացարա՞ն է, որ ներքնահարկում գիշերելու եք գնում:

— Բայց այստեղ ես ամբողջ ամառ աշխատել եմ,— շփոթված պատասխանեց տղան:

Նախագավթում երևաց աղմուկից անհանգստացած դռնապանուհին:

— Ի՞նչ է պատահել: Դա ո՞վ է: Հո գող չէ՞,— հարցերի տարափ տեղաց նա:

— Ոչ, ի՞նչ ես ասում: Միայն թե ասում է, թե այս տունն ինքն է կառուցել, ուրեմն գիշերելու իրավունք ունի: Հիմարի մեկն է:

Միխալկոյի աչքերը փայլեցին: Նա զվարթացավ ու վազելով մոտեցավ դռնապանին:

— Ուրեմն դուք մեր գյուղացի՞ եք,— ուրախացած բացականչեց նա:

— Ինչու,— հարցրեց դռնապանը:

— Ախր ինձ այնպես անվանեցիք, ինչպես մեր գյուղում: Ես հիմար Միխալկոն եմ:

Դռնապանուհին քրքջաց, իսկ ամուսինը միայն ուսերը թոթվեց:

— Որ դու հիմարի մեկն ես, դա արդեն երևում է:— Միայն թե ես գյուղացի չեմ, այլ քաղաքից: Լապի է կոչվում,— այնպիսի տոնով ավելացրեց նա, որ տղան նույնիսկ հոգոց հանեց:

— Օ՛յ, օ՛յ: Երևի դա Վարշավայի նման մեծ քաղաք է, հա՞:

— Ճիշտ է, մեծ չէ,— պատասխանեց դռնապանը,— բայց և այնպես բարեկարգ քաղաք է:

Փոքր-ինչ լռելուց հետո ասաց.

— Համենայն դեպս դու հեռացիր: Այստեղ գիշերել չի կարելի:

Տղան շշմած կանգնեց տեղում: Նա խեղճ-խեղճ նայեց դռնապանին ու հարցրեց.

— Ախր այս հեղեղի տակ ո՞ւր գնամ:

Պատասխանի դիպուկությունը ազդեց դռնապանի վրա: Եվ իսկապես, հորդ անձրևի տակ ո՞ւր գնա այդ խեղճը:

— Է՛հ,— ասաց նա,— ինչ լինելու է թող լինի: Մնա՛: Միայն թե ոչինչ չգողանաս: Իսկ առավոտյան կկորչես այստեղից, որ տերը չտեսնի: Նա շատ խիստ է:

Միխալկոն շնորհակալություն հայտնեց, մտավ կողաշենքն ու խարխափելով գտավ իր սիրած անկյունը:

Ցրտից սառած ձեռքերն իրար շփելով, քամեց կաֆտանը և պառկեց ինչ-որ մի ժամանակ իր բերած փայտի տաշեղների ու աղյուսափոշու վրա:

Նա չտաքացավ: Դեռ ավելին՝ խոնավ ու ցուրտ էր: Բայց նա մանկուց սովոր էր զրկանքներին և այժմվա անհարմարությանը ուշադրություն չդարձրեց: Հիմա նրան այլ հարց էր տանջում. «ի՞նչ աներ: Շարունակեր աշխատանք փնտրել Վարշավայո՞ւմ, թե՞ տուն վերադառնար: Եթե աշխատանք փնտրեր, ապա ինչպիսի՞ և որտե՞ղ: Իսկ եթե տուն վերադառնար, ապա ինչպե՞ս և ո՞ւմ համար»:

Սովից չէր վախենում, դեռ երկու ռուբլի ուներ: Բացի դրանից, սովահարությունը նրա համար նորություն չէր:

— Թող աստծո կամքը լինի,— քրթմնջաց Միխալկոն:

Նա դադարեց անհանգստանալ վաղվա օրվա համար և տրվեց այսօրվա ընձեռած բարիքները վայելելուն: Դրսում հորդառատ անձրև էր գալիս, ինչքան վատ կլիներ, եթե որևէ առվափոսում պառկած լիներ և որքան լավ է այստեղ, իր նկուղում...

Եվ նա քնեց այնպիսի խոր քնով, ինչպիսին քնում է ուժասպառ եղած գյուղացին և որը եթե երազ էլ տեսնում է, ապա իր հարազատների մեռած հոգիները միայն:

Իսկ վա՞ղը: Ինչպես աստված կամենա...

Առավոտյան ամպերը ցրվեցին, ծագեց արևը: Միխալկոն մի անգամ էլ շնորհակալություն հայտնեց դռնապանին ու հեռացավ: Շատ առույգ էր, չնայած երեկվա անձրևից հետո մազերը կպել էին գլխին, իսկ կաֆտանը ծառի կեղևի պես փայտացել էր:

Մի ակնթարթ կանգնեց դարպասի մոտ՝ մտածելով, ա՞ջ գնա, թե ձախ: Անկյունում պանդոկ նկատելով, մտավ նախաճաշելու: Մի մեծ բաժակ օղի խմեց, զվարթացավ ու շարժվեց այն ուղղությամբ, ուր երևում էին շինարարական փայտամածները:

«Աշխատանք փնտրե՞լ, թե՞ տուն վերադառնալ»,— երկմտում էր նա:

Հանկարծ մոտակայքում ուժեղ որոտ լսվեց, կարծես ռումբ պայթեց: Հետո երկրորդը, ավելի ուժեղը:

Տղան շուրջը նայեց:

Մի երկու հարյուր քայլ այն կողմ, աջից, շինարարական փայտամածներն էին, իսկ նրանց վերևում կարծես կարմիր ծուխ էր բարձրանում:

Ինչ-որ անհասկանալի ու անհավատալի բան էր կատարվել:Հետաքրքրությունը պատեց Միխալկոյին, և նա սայթաքելով ու ջրափոսերի մեջ չլմփացնելով, վազեց այդ ուղղությամբ:

Չսալահատակված փողոցում, որտեղ ընդամենը մի քանի տներ կային, այս ու այն կողմ էին վազում ինչ-որ բանից անհանգստացած մարդիկ: Նրանք գոռում ու մատով ցույց էին տալիս կիսակառույց

տունը, որի մոտ թափթփված էին տախտակներ, ծռմռված սյուներ ու հենց նոր վայր ընկած աղյուսե բեկորներ: Այդ ամենից վերև բարձրանում էր կարմիր աղյուսափոշու ամպը:

Միխալկոն մոտ վազեց ու տեսավ թե ինչ է կատարվել. նոր, դեռ կառուցումը չավարտած տունը փլվել էր: Մի պատը վերևից մինչև ներքև փուլ էր եկել, մյուսը՝ մինչև կեսը: Ճեղքվածքներից երևում էին լուսամուտների շրջանակները, իսկ առաստաղի երկար հեծանները ծռմռվել ու ճեղքվել էին երկարությամբ ու լայնությամբ:

Հարևան տան լուսամուտներից երևացին կանանց վախվորած դեմքեր: Բայց փողոցում որմնադիրներից բացի մի քանի հոգի կային միայն: Դեպքի մասին լուրը դեռ չէր հասցրել տարածվել մինչև քաղաքի կենտրոնը:

Առաջինն ավագ վարպետը ուշքի եկավ:

— Ոչ ոք չի մահացե՞լ,— հարցրեց նա դողալով:

— Կարծես՝ ոչ ոք: Բոլորը նախաճաշում էին:

Վարպետը սկսեց հաշվել բանվորներին, բայց ամեն անգամ սխալվում էր:

— Արհեստավորներն այստե՞ղ են..

— Այստեղ են:

— Իսկ օժանդակ բանվորնե՞րը...

— Մենք այստեղ ենք:

— Ենջեյը չկա,— լսվեց ինչ-որ մեկի ձայնը:

Բոլորը քարացան:

— Իսկապես, նա ներսում էր:

— Հարկավոր է նրան փնտրել,— խռպոտած ասաց վարպետը:

Եվ ուղղվեց դեպի փլված տունը: Նրա ետևից շարժվեցին նաև մի քանի համարձակներ:

Միխալկոն մեքենաբար հետևեց նրանց:

— Ենջե՛յ, Ենջե՛յ,— կանչում էր վարպետը:

— Մի փոքր հեռու մնացեք,— զգուշացրեց նրան ենթավարպետներից մեկը,— պատն ամեն րոպե կարող է փուլ գալ:

— Ենջե՛յ, Ենջե՛յ...

Որպես պատասխան ներսից միայն տնքոց լսվեց:

Պատը մի տեղ ճեղքվել էր և դռան չափ մի անցք էր գոյացել: Վարպետը վազեց մյուս կողմից, նայեց, բռնեց գլուխը: Հետո ամեն ինչ մոռացած ամբողջ թափով վազեց քաղաք:

Պատի մյուս կողմում անասելի տանջանքների մեջ մի մարդ էր գալարվում: Հեծանը կոտրել էր նրա ոտքերն ու սեղմել գետնին: Գլխավերևում կախված էր պատի մի մասը, որը ճարճատում էր և պատրաստ էր ամեն րոպե փուլ գալու:

Ատաղձագործներից մեկն սկսեց ուշադիր զննել վտանգավոր գոտին, իսկ սարսափից քարացած որմնադիրները նայում էին նրա աչքերին՝ ամեն րոպե պատրաստ օգնության հասնելու, եթե դա հնարավոր է:

Վիրավորը ջղաձգվեց ու բարձրացավ երկու ձեռքերի վրա: Նա գյուղացի էր: Շուրթերը ցավից սևացել էին, դեմքը կավճի գույն էր ստացել, աչքերը փոս էին ընկել: Նա նայում էր մի քանի քայլ այն կողմ կանգնած մարդկանց, տնքում, բայց սիրտ չէր անում օգնության կանչել:

Միայն շշնջում էր.

— Աստվա՛ծ իմ, ո՛վ ամենակարող աստված...

— Նրան մոտենալ ոչ մի կերպ հնարավոր չէ,— խուլ ձայնով ասաց ատաղձագործը:

Ամբոխը ետ քաշվեց:

Ամբոխի և տան միջև կանգնել էր Միխալկոն բոլորից ավելի շատ վախեցած ու սարսափած:

Անհասկանալի բան էր կատարվում նրա հետ: Նա կարծես զգում էր վիրավորի ցավը, նրա սարսափն ու հուսահատությունը, բայց և միաժամանակ իր մեջ ինչ-որ աներևակայելի ուժ էր զգում, որը նրան առաջ էր մղում...

Նրան թվում էր, թե ամբոխի միջից միայն ինքն է պարտավոր փրկելու մարդուն, որը գյուղից է եկել մի կտոր հաց վաստակելու համար: Եվ երբ մյուսները մտածում էին, թե «հիմա կգնամ օգնության», Միխալկոն մտածում էր. «Չե՛մ գնա, չե՛մ ուզում...»

Երկչոտությամբ ետ նայեց: Նա կանգնած էր ամբոխի առջև, պատին բոլորից ավելի մոտ:

— Չե՛մ գնա,— շշնջաց նա ու բարձրացրեց ոտքերի մոտ ընկած երկար ձողը:

Ամբոխի մեջ շշուկներ լսվեցին.

— Սա՞ ով է: Ի՞նչ է ուզում անել:

— Լռի՛ր:

— Ամենակարող աստված, գթա ինձ,— ցավից հեծկլտալով տնքում էր վիրավորը:

— Գալի՛ս եմ, գալի՛ս,— բացականչեց Միխալկոն և մոտեցավ ավերակներին:

— Երկուսով էլ կկորչե՛ք,— սարսափեց ատաղձագործը:

Միխալկոն արդեն դժբախտի մոտ էր: Նա տեսավ կոտրատված ոտքերը, արյան լճակը և աչքերի առջև մթնեց:

— Եղբայր իմ, եղբա՛յր,— մրմնջաց վիրավորն ու գրկեց նրա ոտքերը:

Միխալկոն ձողը մտցրեց հեծանի տակ և աներևակայելի ուժով մի փոքր բարձրացրեց այն:

Լսվեց ճայթյուն ու երկհարկանի շենքի բարձրությունից մի քանի աղյուսներ թափվեցին ցած:

— Փլվում է,— գոռացին որմնադիրներն ու մի կողմ փախան:

Բայց Միխալկոն ոչինչ չէր լսում, չէր մտածում, չէր զգում: Ուսով նորից հրեց ձողն ու հեծանը Ենջեյի ոտքերի վրայից մի կողմ տարավ: Վերևից աղյուսի կտորներ էին թափվում, կարմիր փոշին խտանում էր՝ լցնելով ողջ տունը: Փլատակների միջից ինչ-որ շարժում լսվեց: Վիրավորը բարձր տնքաց ու միանգամից լռեց:

Քանդված պատի ճեղքի միջից երևաց Միխալկոն: Նա քայլում էր կռացած, դժվարությամբ տանելով վիրավորին: Զգուշությամբ անցավ վտանգավոր գոտուց, կանգնեց ամբոխի առջև և միամիտ ուրախությամբ գոռաց.

— Գալի՛ս է... գալի՛ս է: Միայն թե նրա կոշիկի մեկն այնտեղ մնաց:

Որմնադիրները գրկեցին ուշագնաց վիրավորին և զգուշությամբ տարան դեպի մոտակա դարպասները:

— Ջո՛ւր բերեք,— գոռում էին նրանք:

— Քացա՛խ...

— Բժի՛շկ կանչեք...

Միխալկոն նրանց ետևից քարշ էր գալիս ու մտածում. «Այ թե լավ ժողովուրդ են վարշավացիք, աստված վկա»:

Նկատելով, որ ձեռքերն արյունոտ են, ջրափոսի մեջ լվացվեց ու կանգնեց դարպասի մոտ, որտեղից ներս տարան վիրավորին: Փորձ չարեց ներս խցկվել, հո բժիշկ չէ՞: Միթե՞ կարող է նրան օգնել:

Այդ ընթացքում փողոցն ավելի մարդաշատ դարձավ: Վազում էին հետաքրքրասերները, սուրում էին կառքերը, իսկ հեռվում արդեն զրնգում էին հրշեջ խմբերի զանգերը, որոնց ինչ-որ մեկը հասցրել էր կանչել:

Բերանբացների ամբոխը, նորությունների ու արտակարգ դեպքերի ծարավ այդ շրջմոլիկները հավաքվել էին դարպասի մոտ, իսկ ավելի տաքարյունները բռունցքների օգնությամբ իրենց համար ճանապարհ էին բացում արյունալի տեսարանն ավելի լավ տեսնելու համար:

Նրանցից մեկի ճանապարհը փակեց դարպասի մոտ կանգնած Միխալկոն:

— Հեռացիր այստեղից, բերանբացի մեկը,— գոռաց պարոնը, փորձելով մի կողմ հրել ոտաբոբիկ գյուղացուն:

— Թե չէ ի՞նչ,— նրա բարկությունից զարմացած հարցրեց տղան:

— Իսկ դու ո՞վ ես, լպիրշ անպատկառ,— գոռաց նրա վրա հետաքրքրասերը:— Սա ի՞նչ բան է: Որտե՞ղ է ոստիկանությունը: Մեկը չկա, որ այս ավարաներին խելքի բերի:

«Ոստիկանությո՞ւն: Դա լավ բանի չի հասցնի»,— մտածեց Միխալկոն, վախենալով, որ իր արարքի համար իրեն բանտ կնստեցնեն:

Եվ որպեսզի դժբախտության մեջ չընկնի, կամացուկ խցկվեց ամբոխի մեջ:

Մի քանի րոպե անց ներսից կանչեցին նրան, ով մեռնողին դուրս էր բերել փլատակների տակից:

Ոչ ոք ձայն չհանեց:

— Ինչպիսի՞ն էր նա: Ի՞նչ կար հագին,— հարցրին ամբոխի միջից:

— Գյուղացի էր: Սպիտակ կաֆտանով, կլոր գլխարկով, ոտաբոբիկ...

— Հե՛յ, հապա փողոցում նայեցեք: Այդպիսին չկա՞:

Սկսեցին փնտրել:

— Այդպիսին այստեղ կար,— գոռաց ինչ-որ մեկը,— բայց արդեն գնացել է:

Նրան փնտրելու ելավ ոստիկանությունը, փողոցով մեկ որմնադիրներն էին փնտրում, բայց Միխալկոյին այդպես էլ չգտան...

1880